

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋԱՐԸՎԱԸ ԹԵՎԱԿՈՒՄԻՄ Ե ՎՃՌՈՐՈՇ ՓՈՒԼ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

վեն իրենց տրամաբանական ավարտին:

յալ՝ Քրեական օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով, որը վերաբերում է խմբի կողմից կատարված բռնությանը»,- ասված է ներքին գործերի նախարարության հայտարարության մեջ:

Մեկնաբանելով տեղի ունեցածը, Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Կախա Կալաձեն հայտարարեց, որ ընդդիմությունը ասելիք չունի, սնանկացել է, ուստի եւ դիմում է նման սադրանքների:

ԸՆԴՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԱՆՑ ՔԱՐՈՋԱՐԸՎԱԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանում հոկտեմբերի 4-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, «Վրացական երազանքից» բացի, մասնակցում է 13 քաղաքական սուբյեկտ, որոնք ակտիվ ներգրավվեցին նախընտրական քարոզարշավի գործընթացում:

Մասնավորապես, Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնում իշխող «Վրացական երազանք», կուսակցության կողմից երրորդ անգամ առաջադրված գործող քաղաքապետ Կախա Կալաձեն այդ պաշտոնի համար մրցակցում է «Գախարիա» Վրաստանի համար» եւ «Լեյո-Ղոր Վրաստան» կուսակցությունների թեկնածու, վերջինիս քաղաքական միավորման գլխավոր քարտուղար Իրակլի Կուարաձեն:

Նշենք նաեւ, որ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում «Գախարիա» Վրաստանի համար», «Ղոր Վրաստան», «Լեյո» կուսակցությունները քաղաքապետի թեկնածու չեն առաջադրել եւ ներկայացրել են միայն տեղի սակրբուլոյի անդամության թեկնածուների համամասնական ցուցակը:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԱՄՊԻՆՁԱ.



Ասպինձայի մունիցիպալիտետում «Վրացական երազանքի» կողմից երկրորդ անգամ քաղաքապետի թեկնածու ներկայացված Ռոստոմ Մազարաձեի թեկնածուի խորհրդարանի պատգամավոր Անտոն Օբոլաձեի, սակրբուլոյի փոխնախագահ, 6-րդ անգամ Դամալայից սակրբուլոյի մեծամասնական պատգամավորության թեկնածու առաջադրված Էմին Բալոյանի հետ նախընտրական քարոզարշավի շրջանակում, Դամալա, Տոլուշի գյուղերի բնակիչների հետ հանդիպմանը, հիմնականում շեշտը դրեց այդ բնակավայրերում ենթակառուցային նախագծերի իրականացման վրա, նշելով, որ քաղաքապետարանն այդ նպատակով բանակցություններ է վարում ներդրումներ իրականացնող ընկերությունների հետ, եւ հուսով է, որ մունիցիպալային բյուջեի համաֆինանսավորմամբ այդ նախագծերը կհասց

ԵՐԲ ԿՐՔԵՐԸ ԱՐԴԵՍԱԿԱՆՈՐԵՆ ԲՈՐՈՔՎՈՒՄ ԵՆ

Արդեն մի քանի օր է, ինչ Թբիլիսիում, Մելիքիշվիլիի պողոտայում տեղակայված Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Կախա Կալաձեի ընտրական շտաբի դիմաց, ընտրություններին բոլորտ հայտարարած ընդդիմության եւ որոշ հասարակական կազմակերպությունների խրախուսմամբ, անցկացվում են հանրահավաքներ, որոնք հաճախ ուղեկցվում են խմբային բռնությամբ եւ իրավապահների հետ ընդհարումներով:

Մասնավորապես, սեպտեմբերի 8-ին Մելիքիշվիլիի պողոտայում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ, երբ մի խումբ երիտասարդների սադրիչ գործողությունների արդյունքում տեղի ունեցավ ընդհարում նրանց եւ «Վրացական երազանք» կուսակցության կողմնակիցների միջեւ, ներքին գործերի նախարարությունը հետաքննություն է սկսել խմբային բռնության հոդվածով:

«Ներքին գործերի նախարարությունը հետաքննություն է սկսել Թբիլիսիում, Մելիքիշվիլիի պողոտայում քաղաքացիների միջեւ բախման միջադեպի վերաբեր-



ԱՎԱՆԴՈՒՅՑ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 961-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԴ, ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Քաղաքի օրվա առիթով տեղի ունեցած տոնական միջոցառմանը աշակերտներին հանձնվեցին պարգևները, խոսվեց քաղաքի պատմության ու մշակույթի մասին, տեղի ունեցան ավանդական ուտեստների համտես, տարբեր մարզական եւ մշակութային միջոցառումներ: Տոնն ավարտվեց «Գուֆի Լենդ» խմբի համերգով եւ շքեղ հրավառությամբ:

Ախալքալաքի օրվան նվիրված միջո-

ցառմանը ներկա էին Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Ջալալ Գելաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարարի տեղակալ Ջվիտա Գաբիտովան, Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, սակրբուլոյի պատգամավորներ եւ տեղական ինքնակառավարման մարմինների այլ ներկայացուցիչներ:



ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԴՎԱԿԻԹ ՄԴԻՆԱՐԱՁԵՆ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Իրակլի (Դաչի) Բերաիան աշխատակիցներին ներկայացրեց մաքսային ղեկարտամենտի պետի տեղակալ Դավիթ Մդինարաձեին:

Դավիթ Մդինարաձեն իրավաբան է, Ֆրանսիայի պետական համալսարանում (Université Paris VIII) ստացել է իրավագիտության մագիստրոսի որակավորում:

Դավիթ Մդինարաձեն Վրաստանի ներքին գործերի նախարարությունում եւ Վրաստանի Պետական անվ-

տանգության ծառայությունում զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ:

Միջոցառմանը ներկա էին մաքսային ղեկարտամենտի ղեկավար Սիխեիլ Չոկոշվիլին եւ ղեկարտամենտի այլ բարձրաստի-




ճան պաշտոնյաներ:

«ՔՈՒԹԱՅԻՍԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ԱՆՃԱԿԵՏՈՒՄ ԿԱՆԽՎԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄՔ ԶԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿՅԱ ԻՐԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

«Քութայիսի օդանավակայանի» ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային անցակետում հայտնաբերվել է օրենքի հինգ խախտում:

Մասնավորապես, մաքսային ծառայողները, կասկածի հիման վրա, Վրաստանի քաղաքացիների ինչպես ֆիզիկական, այնպես էլ նրանց պատկանող ուղեբեռի մանրամասն ստուգման արդյունքում, հայտնաբերել են, ընդհանուր առմամբ, 559,92 գրամ չհայտագրված ոսկե զարդեր ու մետաղադրամներ:



Չհայտագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմել է 91,094 լարի:

Երկու օրինախախտ քաղաքացիների գործերի նյութերը, հետագա գործողությունների համար, փոխանցվել են ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը, իսկ երեք օրինախախտ քաղաքացիները տուգանվել են, ընդհանուր առմամբ, 30 641 լարիով՝ համաձայն Մաքսային օրենսգրքի 168-րդ հոդվածի առաջին մասի:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն

«ՄԱՐՓԻ» ԱՆՃԱԿԵՏԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԸ ԿԱՆԽՎԵԼ ԵՆ ԶԱՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Մարփի» մաքսային անցակետում օրենքի խախտում է հայտնաբերվել:

Մասնավորապես, կասկածի հիման վրա, մաքսային ծառայողները, Վրաստանի քաղաքացու վարած տրանսպորտային միջոցի մանրամասն զննման արդյունքում, հայտնաբերել են բժշկական/կոսմետիկ նպատակներով նախատեսված ներարկային ղեղամիջոցների 300

չհայտագրված սրվակներ:

Չհայտագրված ապրանքների մաքսային արժեքը կազմել է 81 000 լարի:

Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

ԿԱՆԽՎԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄՔ ԶԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԶԱՐԴԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Մարփի» մաքսային անցակետում հայտնաբերվել է երեք խախտում:

Մասնավորապես, մաքսային ծառայողները, կասկածի հիման վրա, Վրաստանի եւ օտարերկրյա քաղաքացիների ուղեբեռի

ստուգման արդյունքում, հայտնաբերել են 194 գրամ չհայտագրված ոսկե զարդեր ու դրամներ: Չհայտագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը

կազմել է 40 030 լարի: Օրենքը խախտած մեկ քաղաքացու գործի նյութերը, արձագանքման համար, փոխանցվել են ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը, իսկ օրենքը խախտած երկու քաղաքացիներ տուգանվել են 21 433 լարի գումարով:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԵԹԵ ԱՇՈՒՆ Է ՍՐՏՈՒՄ

Արդեն մանրել են ութերորդ տասնամյակը, շատ հարցեր, որոնցով նախորդ տարիներին հետաքրքրվում էի, կորցրել են սրուբյունը, կարծես երկրորդական պլան են մղվել: Երեխաներս ասում են, որ ինքս ինձ «պառավեցնում են»:



Իրոք, հաճախ տարեց մարդիկ ասում են. «Ես ծեր մարդ եմ: Ինձ համար արդեն ուշ է որեւէ բան փոխելը: Այս տարիքում, էլ ինչո՞ւ պիտի փոխվեմ»: Իսկապես, ինչո՞ւ: Դե, եթե ծեր առողջական վիճակը բավարարում է ձեզ կամ, եթե ցանկանում եք կյանքի վերջին տարիներին հիվանդ ու դժբախտ լինել, գիտակցաբար կրճատել ձեր կյանքը, այդ դեպքում, հիարկե, կարող եք չփոխվել: Բայց եթե դուք ցանկանում եք բարելավել ձեր ինքնազգացողությունը, երկարացնել այս մոլորակում ձեր մնալու ժամկետը, դուք պետք է աշխատեք ձեզ վրա, վերափոխվեք ու կատարելագործվեք՝ անկախ տարիքից: Միայն մեր երկրում է (եւ որոշ հետադարձ երկրներում, որոնց հետ պետք չէ համեմատվել) տիրում այն կարծիքը, որ մեծ տարիքում մարդը պետք է դժբախտ ու հիվանդ լինի:

Գիտակցաբար կրճատել ձեր կյանքը, այդ դեպքում, հիարկե, կարող եք չփոխվել: Բայց եթե դուք ցանկանում եք բարելավել ձեր ինքնազգացողությունը, երկարացնել այս մոլորակում ձեր մնալու ժամկետը, դուք պետք է աշխատեք ձեզ վրա, վերափոխվեք ու կատարելագործվեք՝ անկախ տարիքից: Միայն մեր երկրում է (եւ որոշ հետադարձ երկրներում, որոնց հետ պետք չէ համեմատվել) տիրում այն կարծիքը, որ մեծ տարիքում մարդը պետք է դժբախտ ու հիվանդ լինի: Չարագացած երկրներում մարդիկ այն կարծիքի են, որ նույն

ԳԻՏԵՔ, ԱՐԴՅՈՔ...

ՄԱՏՆԱՋԱՐԴԱՐՈՒՄ. ՀԻՆ ԴԱՐԵՐԻՑ ԵԿՈՂ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հետաքրքիր է իմանալ, թե ե՞րբ է մարմնավորվել «գեղեցիկ մատների» հոգեբանությունը: Այսօր մատնահարդարումը-մանիկյուրը դարձել է ժամանակակից կանանց անձնաստեղծում գաղափարը: Իսկ ինչպիսի՞ն է այն եղել իհնձ ժամանակներում:



Բոլոր դարերում էլ՝ գեղեցիկ ու խնամված ձեռքերը մեծ հարգանք են վայելել: Եվ նույնիսկ ամենօրյա մանիկյուրը ունի իր պատմությունը: Մանիկյուրային գործը հայտնի է եղել նաեւ Հին Եգիպտոսում: Այնտեղ եղունգները ներկել են այն տղամարդիկ, որոնց վարկանիշը բարձր է եղել: Հնում ձեռքերի ու եղունգների արտաքին տեսքի հետ տարբեր իմաստներ են կապել: Օրինակ, ճապոնիայում ասում են, որ իմաստուն մտքերը ի հայտ են գալիս միայն երկար եղունգներ ունեցող մարդկանց մոտ: Իսկ Հին Հունաստանում եղունգների խորքի մասերը, որ Լուսնին են նմանվում, չեն ներկել: Վաղ միջնադարում, ոչ մի դեպքում չէր կարելի երկար եղունգներ ունենալ, այն ասոցացվում էր վիուկների ու արմատների մարդկանց հետ: 19-րդ դարի վերջում մոդեռն է եղել ունենալ նեղ դաստակ: Մատների ծայրերը նեղացնում էին, եղունգները՝ կլորացնում, ձեռքերը փայլուն տեսք էին

ստանում: Եղունգներին փայլուն տեսք էին հաղորդում՝ հատուկ փայլեցնող փոշու եւ եղունգների համար նախատեսված փայլեցնող սոդոցիկի օգնությամբ: Մանիկյուրը շատ մեծ տարածում ուներ Ֆրանսիայում: Մանիկյուրային արվեստը սկսել է զարգանալ ԱՄՆ-ում: Սկզբում եղունգները մշակել են միայն սոդոցիկով եւ փայլեցրել են հատուկ թավշյա կտորով, որի օգտագործումը զանգվածային բնույթ էր կրում, չնայած, որ այդպիսի կտորները շատ թանկ արժեին: Հատուկ լաքեր դեռ չկային եւ եղունգները միայն կարելի էր զարդարել նրանք փայլեցնելով: 1932 թվականին ստեղծվեց առաջին լաքը եղունգների համար: Այն կարմիր գույնի էր ու պարունակում էր բարդ գունատու նյութեր, որը շատ արագ շերտատվում էր, բայց ուներ անսովոր հաջողություններ ամենախայտնի գեղեցկության սրահներում:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ

Ավարտվեցին ամառային արձակուրդները, սեպտեմբերի 15-ին կսկսվի նոր ուսումնական տարին: Այս օրերին ծնողների գլխավոր հոգսը նոր ուսումնական տարվա համար երեխաների նախապատրաստումն է: Ստորեւ ներկայացնում ենք մի շարք խորհուրդներ, որոնք ծնողներին կօգնեն նոր ուսումնական տարվա համար երեխաների նախապատրաստության գործում:



Կարգավորում ենք օրվա ռեժիմը
Ամառվա ընթացքում շատերը կորցնում են սովորական աշխատանքային ռեժիմը՝ ավելի ուշ են պառկում քնելու եւ ուշ են արթնանում, երբեմն նույնիսկ նախատեսված ժամանակից քիչ են քնում: Դասերի մեկնարկից զոնե մեկ շաբաթ առաջ սկսեք նախապատրաստվել դպրոցական ռեժիմին եւ ավելի շուտ քնել ու արթնանալ: Դա անհրաժեշտ է հանգստացած դպրոց գնալու համար:
Պլանավորելով օրը, սովորում ենք կառավարել ժամանակը, ճիշտ բաշխել առաջադրանքները, մտավոր եւ ֆիզիկական ակտիվությունը, աշխատանքը եւ հանգիստը՝ լավագույն արդյունքի հասնելու, առողջ զգալու եւ ազատ ժամանակ ունենալու համար:
Նոր ուսումնական տարին՝ նոր իրերով
Օգտագործեք նոր ուսումնական տարվա սկիզբը որպես հնարավորություն՝ թարմացնելու եւ հարմարեցնելու ձեր աշխատատեղը եւ գնելու այն ամենը, ինչ անհրաժեշտ կլինի դպրոցում:

Տոնում ենք ուսումնական տարվա սկիզբը
Ուսումնական տարին փոքրիկ ընտանեկան խնջույքով, համեղ ուտեստներով սկսելը կառաջացնի դրական հույզեր: Մի՛ մոռացիր փոքրիկ նվերների մասին, որոնք կարող են լինել կրթական տեսակի, օրինակ՝ հետաքրքիր նոթատետր կամ գրիչ:
Թարմացնում եք գիտելիքները
Քանի որ ձեր երեխաների դպրոցական գիտելիքներն անցել են «ոչ ակտիվ ռեժիմի», նոր ուսումնական տարվա առաջին ամիսները գնալու են վերհիշելուն: Երեխան պետք է վերանայի այն, ինչ սովորել է, դպրոցից մի քանի շաբաթ առաջ, ծանոթանա նոր դասագրքերին:

ՀԻՆԳ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՀԱՋՈՂ ՍԿԱԵԼՈՒ ՀԱՄԱՐ


Նոր ուսումնական տարվա սկիզբը ոգեւորիչ է, բայց նաեւ պատասխանատու եւ լի նոր մարտահրավերներով: Որպեսզի տարին սկսես վստահությամբ ու լավ տրամադրությամբ, կներկայացնենք 5 պարզ, բայց շատ օգտակար քայլ, որոնք ուսումը կդարձնեն առավել հաճելի ու արդյունավետ:
Սահմանիր նպատակ
Ինքդ քեզ հարցրու. «Ի՞նչ են ուզում այս տարի անել»: Դա կարող է լինել գերազանց գնահատականներ ստանալը կամ պարզապես ավելի կազմակերպված ու ինքնավստահ դառնալը: Երբ նպատակդ հստակ է, ճանապարհն է՛լ ավելի պարզ է դառնում:
Հիշիր, պարտադիր չէ, որ նպատակդ մեծ լինի, հաճախ ամենամեծ փոփոխությունները սկսվում են փոքր, բայց հաստատուն քայլերից:
Պլանավորիր օրը
Դասերը, տնայինները եւ ընկերների հետ հանդիպումները

պլանավորելը կօգնի կյանքդ ավելի կանոնակարգված դարձնել եւ նվազեցնել սթրեսը: Օգտվիր օրացույցից, նոթատետրից կամ հեռախոսի Notes-ից, որպեսզի օրը կազմակերպված ու արդյունավետ լինի:
Երբ օրը լավ կազմակերպված է, առաջադրանքներն ավելի հեշտ են կատարվում, իսկ ազատ պահերը կարող են վայելել լիարժեք՝ առանց շտապելու ու անհանգստության:
Ունեցիր ուսման քո փոքրիկ անկյունը
Ստեղծիր քեզ համար փոքրիկ ու հարմարավետ ուսման անկյուն: Միջավայրը մեծ ազդեցություն ունի կենտրոնացման եւ հիշողության վրա: Քեզ կարող է օգնել սեղանի վրա դրված հին խաղալիքը, պատին փակցված հետաքրքիր գրությունը, սիրելի բաժակով թեյը կամ սուրճը, նոթատետրը:
Հոգ տար առողջությանդ մասին
Քունը, առողջ սնունդը եւ

ֆիզիկական ակտիվությունն ամենակարեւոր «գործիքներն» են հաջողության հասնելու համար: Այս երեք պարզ, բայց կարեւոր սովորությունները միասին ստեղծում են արդյունավետ ուսման ու հաջողության հիմքը:
Դրական տրամադրվիր
Եվ վերջապես, կլինեն դժվար պահեր. ցածր գնահատականներ, ուշացած տնայիններ կամ փոքր անհաջողություններ: Այդ պահերին հիշիր, որ սխալներն ու դժվարությունները սովորեցնում են հասկանալ սեփական ուժեղ ու թույլ կողմերը: Այնպես որ, երբ հանդիպում ես դժվարության, մի՛ վախեցիր, նայիր դրան որպես սովորելու եւ աճելու հնարավորություն. ամեն նոր մարտահրավեր մոտեցնում է քեզ նպատակի:
Դե ինչ, հետեւիր այս պարզ խորհուրդներին, սովորիր, զարգացիր եւ իրագործիր քո մեծ ու փոքր նպատակները:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

- Վատ են ապրում նրանք, ովքեր ողջ կյանքում պատրաստվում են ապրել: **ՊՈՒԲԼԻՈՍ ՍԻՐՈՍ**
- Մոր սիրտն անդունդ է, որի խորքում միշտ մերում կգտնվի: **ԲԱԼՁԱԿ**
- Իշխանության հասած ընկերը կորած ընկեր է: **Հ.ՄԱՄՍ**
- Չի կարելի հանուն ապրելու կորցնել կյանքի իմաստը: **Դ.ՅՈՒՎԵՆԻԼ**
- Բնության մեջ ամեն ինչ իմաստուն կերպով է մտածված ու կառուցված, եւ յուրաքանչյուրը պետք է զբաղվի իր գործով. կյանքի բարձրագույն արդարությունն այդ իմաստության մեջ է: **ԼԵՆՆԱՐԴՈՂ ՂԱ ՎԻՆՉԻ**
- Ընկերը նա է, ով ամեն անգամ, երբ դու զգում ես նրա կարիքը, կռահում է այդ մասին: **ՌԵՆԱՐ**
- Եթե օտարերկրյա պիտակներով ապրանքները չլինեին, ապա շատերը աշխարհագրությունից գաղափար չէին ունենա: **Ս.ԱՍՐԳՅԱՆ «Վրաստանի» ընթերցող**



ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆՊԵՏԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԱՏՕ-ՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՄՊԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 11-ին աշխատանքային այցով Հայաստանում էին գտնվում ՆԱՏՕ-ում հավատարմագրված դեսպանները: Այդ շրջանակում, հյուրերը հանդիպում ունեցան Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:



Հայաստանի վարչապետի հետ հանդիպմանը, քննարկվեցին Հայաստան-ՆԱՏՕ գործընկերությանը վերաբերող հարցեր, նշվեց համագործակցության զարգացման եւ շարունակականության կարևորությունը:

Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց Հայաստանի կողմից խաղաղության եւ կայունության ամրապնդման ուղղությամբ տարվող քաղաքականությունը: Վարչապետը ընդգծեց, որ Հայաստանը կարելի է միջազգային գործընկերների, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հետ փոխգործակցությունը, ինչը նպաստում է նաեւ տարածաշրջանում անվտանգության եւ կայունության օրակարգի առաջընթացը:

Դեսպանները ողջունեցին վաշինգտոնյան հռչակագրի ստորագրումը եւ խաղաղության Համաձայնագրի նախատորագրումը՝ դրանք որակելով որպես վճռորոշ քայլեր տարածաշրջանում երկարաժամկետ կայունություն ապահովելու ուղղությամբ:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին տարածաշրջանային անվտանգությանը, Հայաստանի բարեփոխումների

օրակարգին եւ միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցերի շուրջ:

Հայաստանի նախագահի հետ հանդիպմանը Վահագն Խաչատուրյանը, ողջունելով դիվանագիտական ներկայացուցիչներին, կարեւորեց այսօրինակ այցելությունները Հայաստան-ՆԱՏՕ գործընկերության ամրապնդման տեսանկյունից: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց տարածաշրջանային իրավիճակին, կայուն եւ տեսական խաղաղության հաստատման ուղղությամբ տարվող քայլերին, ինչպես նաեւ միջազգային գործընկերների դերակատարությանը:

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿԿՐՃԱՏՎԻ ՎԵՑ ԱՄՍՈՎ

Հայաստանի պաշտպանության նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել օրենքի նախագիծ, որով առաջարկվում է պարտադիր զինվորական ծառայության ժամկետը կրճատել 6 ամսով եւ սահմանել 18 ամիս՝ սկսած 2026 թվականի ամառային զորակոչից:

Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ դրա ընդունումը պայմանավորված է Հայաստանի կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսված պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատման անհրաժեշտությամբ:

«Վերջին տարիներին, պայմանագրային զինվորական ծառայության ընդլայնման նպատակով, կատարվել են գործուն քայլեր, ի դեմս՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագրի, արհեստավարժ

սերժանտական համակարգի, զինծառայողների առեստավորման համակարգի ներդրման, սահմանամերձ զորամասերում երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի պահպանմանը պայմանագրային զինվորական ծառայության կազմակերպման գործընթացի, որի արդյունքները գնահատվում են դրական եւ միտում ունեն առավել զրավիչ դարձնել ու ընդլայնել պայմանագրային զինվորական ծառայությունը: Այդ

կապակցությամբ՝ նպատակահարմար է գտնվել շարքային կազմի 24-ամսյա պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 2026 թվականի ամառային զորակոչից սկսած կրճատել 6 ամսով՝ սահմանելով 18-ամսյա ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն»,- ասված է հիմնավորման մեջ:

Օրենքի նախագծի ընդունմանը կանխատեսվում է պարտադիր զինվորական ծառայության կազմակերպման ուղղությանը ծախսերի նվազում՝ սկսած 2028 թվականից, քանի որ 2026թ. ամառային զորակոչի շրջանակներում հուլիսի 1-ից սկսած 18 ամիս ծառայության ժամկետն ավարտվում է 2027թ. դեկտեմբերի 31-ին:

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՒՏՈՒՄ Ե

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը սեպտեմբերի 5-ին Մոսկվա կինոթատրոնում մասնակցել է «Շնորհավոր, աղջիկ է»՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ ֆիլմի պրեմիերային:

«Շնորհավոր, աղջիկ է» ֆիլմը ստեղծվել է Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ եւ անդրադառնում է Հայաստանում սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների իրատարաբան խնդրին:

Իր խոսքում, Մարդու իրավունքների պաշտպանը ընդգծեց, որ սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումները շարունակվում են մնալ մեր հասարակության համար մտահոգիչ խնդիր՝ չնայած դրա դեմ պայքարին ուղղված առանձին քայլերին:

- Չնայած ձեռնարկված քայլերին՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները դեռեւս մարտահրավեր են մարդու իրավունքների եւ գենդերային հավասարության երաշխավորման տեսանկյունից: Պատճառները տարբեր են՝ սեռով պայմանավորված կարծրատիպերը, տղա ունենալու գերակայող նախապատվությունը, ընտանիքի ներ-

սում առկա եւ միջավայրային ճնշումները եւ այլն: Ուզում եմ հատուկ արձանագրել, որ մեր շուրջը բազմաթիվ մարդիկ են ապրում, ովքեր բախվում են նշված խնդրին, ում ճակատագրերի վրա այդ երեւոյթը լուրջ ազդեցություն է ունենում: Փաստն այն է, որ մենք հաճախ չենք նկատում այս մարդկանց, նրանց հույզերն ու ապրումները: Մենք պետք է ոչ միայն պայքարենք սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների երեւոյթի դեմ, այլ նաեւ բարձրացնենք հարցին առնչվող հանրային իրազեկվածությունը եւ ցույց տանք խնդիրը որեւէ կերպ վերապրած մարդկանց, որ իրենք միայնակ չեն: Այս համատեքստում մեծ է մասն նախաձեռնությունների դերը,- ասել է Անահիտ Մանասյանը:

Պաշտպանը շնորհակալություն է հայտնել ֆիլմի ստեղծագործական թիմին եւ Նիդերլանդների Թագավորության դեսպանությանը՝ այս կարեւոր նախաձեռնությունը կյանքի կոչելու համար:

ԵՐԵՎԱՆՅԱՆ «ԻՄ ԶԵՆՈՎՈՐԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱՌԱՏՈՆ՝ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՎՐԱՑ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 13-14-ին, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ եւ «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ, «Կասկադ» համալիրի «Գաֆեսճեան» քանդակների պարտեզում կանցկացվի «Իմ ձեռագործ Հայաստան» 3-րդ փառատոնը:

Ձեռարվեստի եւ արհեստների փառատոնին առաջին անգամ կմասնակցեն ոչ միայն հայ, այլեւ վրացի վարպետներ՝ ներկայացնելով իրենց մշակութային արտադրանքը՝ մշակութային երկխոսության

նոր հարթակ ստեղծելով հայ եւ վրացի ժողովուրդների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, փոխհարստացման ու տարածման համար: Փառատոնի ընթացքում տեղի կու-

նենա նաեւ հայկական եւ վրացական ազգային հագուստների ցուցադրություն. կներկայացվեն երկու ժողովուրդների բնորոշ ազգային տարազներ:

Փառատոնի նպատակը՝ ապահովել ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի միջմշակութային համագործակցությունը, նպաստել ստեղծագործող վարպետների գործունեությանը, ինչպես նաեւ արհեստների եւ արվեստների արժեւորմանն ու տարածմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՕԳՈՍՏՈՎ ԵՒ ԱՐՐԵՋՆԱԻ ՕԳՈՍՏԻ ՏԱՐԱՄԵՐԻ

Հայաստանի վարչապետի օդանավը օգոստոսի 30-ին Ադրբեջանի օդային տարածքով է մեկնել արտերկրյա այցի եւ սեպտեմբերի լույս 6-ի գիշերը վերադարձել Հայաստան, հայտնում է վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը: Վարչապետի խոսնակը հիշեցրել է, որ Ադրբեջանական ինքնաթիռները տեսական ժամանակ ՀՀ օդային տարածքով ապահովում են հաղորդակցությունը Ադրբեջանի հիմնական մասի եւ Նախիջևանի ինքնավար հանրապետության միջև: Վարչապետը փոխնոջ հետ օգոստոսի 30-ի սեպտեմբերի 3-ը աշխատանքային այցով մեկնել էր Չինաստան, հետո Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 4-ից երկօրյա աշխատանքային այցով գտնվել է Ճապոնիայում:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՆՅԱՎՅՎԻ «ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԾՈՂՈՎԸ

Հայաստանում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հրապարակել է իր նոր ծրագրի նախագիծը, որն ընդունելու հարցն ընդգրկված է կուսակցության սեպտեմբերի 20-ին կայանալիք հերթական քաղաքական համաժողովի օրակարգում:



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՅՎԱԾ ԵՒ ԳՐԵԾ ՄԵՎ ՄԻՒՈՆ ԱՎՏՈՍԵՔԵՆԱ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված է 953 հազար 965 տրանսպորտային միջոց, որից 343 հազար 220-ը՝ երեւանում: Երեւանի քաղաքապետարանի սեպտեմբերի 8-ի գործակարգավարական խորհրդակցությանն այս մասին հայտնեց Տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Հայաստանում գրանցված ավտոմեքենաների թիվը կազմել է 909 հազար 326, իսկ երեւանում՝ 331 հազար 314:

ՀԵՆՐԻԽ ՄՍԻԹԱՐՅԱՆԸ՝ «Gentleman Inter» ՄՐՅԱՆԱԿԻ ԴԱՓՆԵՎԻՐ



Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մսիթարյանն արժանացել է Իտալիայի հեղինակավոր «Gentleman Award» մրցանակաբաշխության «Gentleman Inter» մրցանակին:

Հենրիխ Մսիթարյանից բացի, մրցանակների են արժանացել նաեւ «Ինֆեր»-ի նախագահ Զուրաբեկ Մարտիրոսյան, փոխնախագահ Սամվել Ջանեթյան, թիմի մի քանի խաղացողներ: «Gentleman Award»-ը ամեն տարի Միլանում անցկացվող մրցանակաբաշխություն է, որը նվիրված է «արդար խաղ»-ին (Fair Play):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

21.09.2025 Բարեկենդան Կարագա Սուրբ Խաչին



Այս կիրակին նախորդում է պահքին, որը նվիրված է Կարագա լեռան վրա Սուրբ Խաչափայտի մատուցող գտնելուն: Ավանդույթի համաձայն՝ տեսիլքով նրանք երեւում է Սուրբ Աստվածածինը եւ պատվիրում մեկնել Արարատյան երկիր՝ Հայաստան: Կույսերը գալիս են Վաղարշապատ: Ճանապարհին, Կարագա լեռան մոտով անցնելիս, Հռիփսիմեն Սբ. Խաչափայտից մի մատուցք, որը ժառանգաբար էր ստացել ու միշտ կրում էր իր պարանոցին, ամփոփում է հայոց հողում: Այդ մատուցքը հրաշքով գտնվում է 7-րդ դարում, որից հետո Հայ Առաքելական Եկեղեցին խաչի տոների շարքում սկսում է տոնել նաեւ Կարագա խաչի տոնը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ

Ձեռնարկով գներով էԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ԱՏԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳՎԵԼ Է



Ձեռնարկով գներով էլեկտրոնային նույնականացման քարտեր ստանալու ժամկետը երկարաձգվել է մինչեւ սեպտեմբերի 19-ը: Նախնական տվյալներով՝ ակցիան պետք է գործեր մինչեւ սեպտեմբերի 5-ը:

Ձեռնարկով գներով նույնականացման քարտերը տրամադրվում են քաղաքացիների որոշակի կատեգորիաների: Հիշեցնենք, որ գործակալությունն օգոստոսի 11-ից քաղաքացիների որոշակի կատեգորիաների համար սկսել է արտոնյալ գներով էլեկտրոնային նույնականացման քարտերի (ID քարտեր) տրամադրման գործընթացը, որի նպատակն է քաղաքացիներին ապահովել էլեկտրոնային փաստաթղթերով եւ բարելավել ընտրողների ցուցակները: Ձեռնարկով գներով կարող են օգտվել չափահաս քաղաքացիներ, որոնք երբեք չեն ստացել էլեկտրոնային նույնականացման քարտ, չափահաս քաղաքացիներ, որոնք էլեկտրոնային նույնականացման քարտը չէղարկվել է ժամկետանց

լինելու պատճառով, կամ կչեղարկվի մինչեւ այս տարվա հոկտեմբերի 5-ը, եւ չունեն վավեր կենսաչափական անձնագիր, քաղաքացիներ, որոնք մինչեւ հոկտեմբերի 5-ը կդառնան 18 տարեկան, եւ որոնք էլեկտրոնային նույնականացման քարտը չէղարկվել է ժամկետանց լինելու պատճառով, կամ կչեղարկվի մինչեւ հոկտեմբերի 5-ը, եւ չունեն վավեր կենսաչափական անձնագիր, քաղաքացիներ, որոնք մինչեւ հոկտեմբերի 5-ը կդառնան 18 տարեկան եւ չեն ստացել էլեկտրոնային նույնականացման քարտ: Նշենք, որ գործընթացի շրջանակում էլեկտրոնային անձնագրերը կտրամադրվեն կես գներով 10-րդ աշխատանքային օրը, իսկ փաստաթղթի համար անհրաժեշտ լուսանկարը կլինի անվճար:

ՍՊՈՐՏ

ԵՎՐՈՔԱՄԵՏ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ ՍՎԱՐՏԵՅ ՏԵՂ ԶԲՎԵՅՆԵԼՈՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒԹՆՅԱԿՈՒՄ



Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի բասկետբոլի հավաքականը, հաջողությամբ հաղթահարելով Եվրոպայի առաջնության խմբային մրցաշարի արգելքները (պարտության մատնեցին Իսպանիայի եւ Կիպրոսի հավաքականներին, զիջեցին Իտալիային, Յունաստանին, Բոսնիա-Հերցեգովինային, Իսպանիայի հետ նույն միավորների առկայությամբ գերադասությունը տրվեց Վրաստանի թիմին՝ իսպանացիներին հաղթելու համար), առաջնության մեկ ութերորդ եզրափակչում՝ 80:70 հաշվով պարտության մատնելով Ֆրանսիայի՝ առաջնության բարձրագույն պարգևին հավակնող թիմին, նվաճեց քառորդ եզրափակչի ուղեգիր:

Մայրցամաքի լավագույն ութնյակի մրցաշարում, Վրաստանի հավաքականը, ցավոք, 79:93 հաշվով զիջեց Ֆինլանդիայի հավաքականին եւ դուրս մնաց մրցաշարից, պաշտոնապես զբաղեցնելով ութերորդ տեղը: Բոլոր դեպքերում, սույն առաջնությունում վրաց բասկետբոլիստների խաղը վստահությամբ կարելի է համարել մեծ առաջընթաց, քանի որ պատմության մեջ առաջին

անգամ Վրաստանի հավաքականը կարողացավ հասնել Եվրոպայի առաջնության քառորդ եզրափակչին, ինչը, բնականաբար, մեծ նվաճում է:

ՖՈՒՏԲՈԼ. 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՃՆԱՐԿԻ ԱՌԱՋՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԽ ԵՐԿՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԻՅ ՀԵՏՈ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ԻՐԵՆՅ ԽՄԲԵՐՈՒՄ ԶԲՎԵՅՆՈՒՄ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆԸ

2026 թվականի աշխարհի առաջնության ընտրական փուլի մեկնարկային խաղում Թուրքիայի հավաքականից սեփական հարկի տակ կրած ցավալի պարտությունից (2:3) հետո, Վրաստանի հավաքականը իր դաշտում 3:0 հաշվով պարտության մատնեց Բուլղարիայի հավաքականին եւ Եվրոպական «Ե» խմբում զբաղեցնում է երկրորդ տեղը, առաջնությունը զիջելով իսպանացիներին, ովքեր հաշվետու փուլում մրցակցի դաշտում 6:0 հաշվով պարտության մատնեցին Թուրքիայի հավաքականին:

Նշենք, որ անցկացրած երկու խաղերում Վրաստանի հավաքականի կազմում բացակայում էին մի քանի հանգուցային խաղացողներ, այդ թվում՝ թիմի ավագ Գուրամ Կաչիան: Վերջինիս բացակայությամբ պայմանավորվեց խվիչա Կվարացխելիայի թիմի ավագի ձեռնակապ ու աննախադեպ ակտիվությունը:

Վրաստանի հավաքականը հաջորդ երկու հանդիպումները կանցկացնի մրցակցի դաշտում, հոկտեմբերի 11-ին՝ Իսպանիայի եւ հոկտեմբերի 14-ին՝ Թուրքիայի հավաքականների դեմ:

Եվրոպական «Բ» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը, չնայած նրան, որ ընտրական փուլի մեկնարկային խաղում, սեփական հարկի տակ 0:5 հաշվով զիջեց Պորտուգալիայի հավաքականին, երկրորդ հանդիպումն Իռլանդիայի հավաքականի դեմ անցկացրեց շատ ավելի նպատակամղված եւ հաջողության հասավ 2:1 հաշվով: Ընտրական փուլի երկրորդ տուրից հետո, Հայաստանի հավաքականը 3 միավորով զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ առաջնությունը զիջելով 6 միավոր հավաքած Պորտուգալիայի թիմին:

Նշենք, որ Ազգերի լիգայի մրցաշարի շրջանակում, Հայաստանի հավաքականի անհաջող ելույթների արդյունքում, դեռեւս օգոստոսին, Ջոն վան՝ տ Սիսկայն ազատվել էր Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնից, եւ թիմը գլխավորեց Երեւանի «Փյունիկի» գլխավոր մարզիչ՝ 46-ամյա Եղիշե Մելիքյանը:

Հայաստանի հավաքականը հաջորդ երկու հանդիպումները եւս կանցկացնի մրցակցի դաշտում, հոկտեմբերի 11-ին՝ Հունգարիայի, իսկ հոկտեմբերի 14-ին՝ Իռլանդիայի հավաքականների դեմ:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Table with 10 columns and 10 rows containing numbers 1-61 in a grid pattern.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 6.Արշակունի թագավոր: 8.Կագմակերպված շուկա, որտեղ իրականացվում են արժեթղթերի առջուվանառքի գործարքները: 10.Քաղաք պատմական Արեւմտյան Հայաստանում: 11.Արյունածու միջատ: 13.Հավի էգ ճուտ: 14.Շահ, օգուտ: 16.Ճար, ելք: 17.Դեղակոծակ: 19.Ճաշակով հարդարված: 21.Ռուսական էտրադայի աստղ: 22.Բարձունք, լեռ: 23.Ներքնահարկ: 27.Թամբալություն, ծուլություն: 29.Հունական այբուբենի տառ: 32.«... արքա»: 33.Տատասկ, պսեն: 35.Բառ, որով կոչում են էակներին: 36.Կղզի Հունաստանում: 37.Երեսի մազը: 39.Դամբարան Հնդկաստանում, ... Մահալ: 42.Կրոս: 44.Պետություն Աֆրիկայում: 46.Եվրոպական եռատակտ պար: 49.Միանիշ թիվ: 50.Անտի: 53.Հարվածային երաժշտական գործիք: 54.Բրոյա թելի գործվածք: 55.Հյուսնի, ատաղձագործի գործիք: 56.Իսպանական բանվորական շարժման գործիչ Խոսե ...: 57.Սոսկ, զեք: 58.Վրաց թագուհի: 59.Ծոված ծայրով, կոր: 60.Չուխա: 61.Աշակերտ:

ՈՒՂԱՆՅԱՆ. 1.Հայ գրող ... Աղայան: 2.Խարյուկ: 3.Նորվեգացի դրամատուրգ, եվրոպական «նոր դրամայի» հիմնադիր՝ Հենրիկ ...: 4.Ոչ կարճ: 5.Չարիք, փորձանք: 7.Երկնային մարմնի շարժման ուղին: 9.Լծկան կենդանի: 12.Լրատվական գործակալություն «... ՏԱՍՍ»: 15.Պեայոյի մոտիկ ընկերը: 18.Հողը փորելու գործիք: 20.Հայաստանի Ազգային հերոս ... Դեմիրճյան: 24.Կրկնակոչիկ: 25.Պանդուխտ: 26.Սեծ կշիռ, քաշ ունեցող: 28.Կոկորո: 30.Վրաստանի արտաքին գործերի նախարար ... Բոճորիշվիլի: 31.Կարեկցություն, խիղճ: 33.Օսմանյան իշխանավոր, մեծահարուստ: 34.Բնակելի կառույց: 38.Հայ բանաստեղծ Գեորգ (Դեւոնդ) ...: 40.Կտավագործ: 41.Ոչ ներկա: 42.Անդունդ: 43.ԽՍՀՄ վաստակավոր արտիստուհի՝ Լյուդմիլա ...: 45.Սեծ պարկ (բրբ.): 47....բուրդ: 48.Հայ կին ֆիդայի: 51.Հայոց թագավոր, Սմբատ Ա Բագրատունու որդին: 52.Մահմեդականների աղոթքի հրավեր:

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Սամվել: 4.Չամբախով: 8.Ռոպե: 10.Նավ: 11.Արայ: 12.Անճա: 14.Ելա: 16.Անսար: 17.Աներ: 18.Արքա: 20.Այն: 21.Ներկա: 22.Անան: 24.Դվին: 27.Ցքի: 29.Անց: 30.Կույս: 32.Ման: 34.Թան: 35.Ցերեկ: 38.Յամբ: 41.Կիրթ: 42.Ականի: 43.Սանա: 44.Նուրբ: 46.Որլա: 48.Ֆրի: 49.Կրակե: 51.Չրի: 52.Եղեսիա: 56.Նանե: 57.Վարձիա: 58.Խան: 59.Անխել: 60.Չգոն:

ՈՒՂԱՆՅԱՆ. 1.Սարյան: 2.Սոպասան: 3.Լեւոն: 4.Չավեն: 5.Սեծարեւոյ: 6.Ավանակ: 7.Վայրագ: 9.Ենա: 13.Նրանք: 15.Լեւնին: 17.Անդ: 19.Րաբունի: 23.Ացտեկ: 25.Վանա: 26.Արցախ: 28.Իմ: 30.Կակաո: 31.Սաթխա: 33.Այնկա: 36.Րաֆֆի: 37.Կարին: 39.Մարա: 40.Բաբկեն: 45.Ուր: 47.Բասեն: 50.Եղեն: 51.Չավար: 53.Արուլ: 54.Օձուն: 55.Մարե:

Գլխավոր խմբագիր, տնօրեն՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՐՈՍՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅ60 ՁՈՆԱՅՅԻՄՈ: ՄԶՈԼՈՏՈ 0105, Ճ.ՅՈՒՐԵՎՈՅ ԺՅՅԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՊԸ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» իրատարակչություն

«ՅՐԱՆՇՅՈՒՆ»
ՄԶՈԼՈՏՈ, ՆԱՅՅՐՈՑԻՑԻՍ
«ՅՐԱՏԱՆ»
ТБИЛИСИ, ГРУЗИЯ
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445
Պարբերականում օգտագործվել են վրացական, հայաստանյան, օտարերկրյա մամուլի, ինչպես նաեւ տեղեկատվական գործակալությունների եւ համացանցային ծախսերի մյուսերը: Խմբագրության դիրքորոշումը կարող է չհամընկնել հեղինակների կարծիքի հետ: